# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՎՍՏՐԻԱ ԵՎ ՄՈՍԿՎԱ

## ՄԵԿՆՈՒՄ

*Սույն թվականի հունիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ավստրիա՝ նախ որպես գլխավոր բանախոս մասնակցելու Գրաց քաղաքում Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի (ԵԵԽ) և Կաթոլիկ Եպիսկոպոսների Եվրոպական Խորհրդի (ԿԵԵԽ) համատեղ գումարված միջեկեղեցական Բ համաժողովին, ինչպես նաև հովվապետական-հայրապետական այցելություն տալու Ավստրիահայոց համայնքին և երրորդ՝ Համայն Ռուսիո և Մոսկվայի Պատրիարք Ալեքսիյ Բ-ի հետ նախագահելու Մոսկվայի Կրեմլի «Ուսպենսկայա» թանգարանում բացվող «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակին:*

*Մեկնելուց առաջ Հայոց Հայրապետն, ըստ ավանդության, թափորով ուղղվեց դեպի Մայր Տաճար, ուր Իջման Սուրբ Սեղանի առջև առ Բարձրյալն առաքեց իր գոհաբանական և բարի երթի աղոթքը: Այնուհետև Վեհափառ Հայրապետը հակիրճ կերպով ներկայացրեց Ավստրիա մեկնելու մանրամասները, որից հետո ավտոմեքենաների շարասյունը Նորին Սրբությանը առաջնորդեց «Զվարթնոց» օդանավակայան:*

## ԺԱՄԱՆՈՒՄ ԱՄՍՏԵՐԴԱՄ

*Առավոտյան, տեղական ժամանակով ժամը 08.00-ին, Ամստերդամի «Շիփհոլ» օդանավակայան ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Բագրատ աբեղա Գալստյանի ուղեկցությամբ:*

*Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց Առաջնորդ Գյուտ արք. Նազգաշյանը, Հոլանդիայի հոգևոր հովիվ Մանվել վրդ. Երկաթյանը, թեմական խորհրդի ատենապետ Պետրոս Սարաձյանը, թեմականներ Արտո Գույումճյանը, Պերճ Ճեպմեճիքյանը և Գրիգոր Չեքեմը:*

*Դիմավորումից և բարիգալստյան խոսքերից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց «Hilton» հյուրանոց:*

## Ս. ՊԱՏԱՐԱԳ «ՍՈՒՐԲ ՀՈԳԻ» ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Հունիսի 22-ին, կիրակի առավոտյան ժամը 10.00-ին, Ամստերդամի հայոց Սուրբ Հոգի եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ, որին մասնակցելու էին եկել բազմաթիվ հայորդիներ Հոլանդիայի տարբեր շրջաններից ու քաղաքներից: Պատարագիչն էր «Էջմիածին» ամսագրի խմբագիր Բագրատ աբեղա Գալստյանը:*

*Հընթացս Ս. Պատարագի, քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ «Ես եկի, զի կեանս ունիցին և առաւել ևս ունիցին» բնաբանով: Հայոց Հայրապետը նախ փառք և գոհություն հայտնեց Ամենակալն Աստծուն,*

որ դարձյալ առիթ ընծայեց իրեն հանդիպելու հոլանդահայ իր կավակներին և այս պատմական եկեղեցում ևս մեկ անգամ սուրբ և անմահ պատարագի հաղորդությամբ ամրացնելու նրանց հարազատությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության հետ: Այնուհետև Նորին Սրբությունը պատմական ակնարկ կատարեց հոլանդահայ գաղութի մասին, անդրադարձավ հայ ժողովրդի ժամանակի այն խոշոր մշակութային ձեռքբերումներին, որոնք տեղի են ունեցել Ամստերդամ քաղաքում՝ մասնավորաբար նշելով Ոսկան Երևանցի վարդապետի կողմից 1666 թվականին և հրատարակված Աստվածաշունչը:

Ապա Վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր այս այցելության մանրամասները՝ մասնակցություն Գրացի Բ միջեկեղեցական համագումարին և միևնույն ժամանակ հայրապետական այցելություն Ավստրիահայոց համայնքին, այնուհետև անձամբ նախագահելու Ռուսաց Ալեքսիյ Բ Պատրիարքի հետ միասին Մոսկվայում բացվող «Հայ Եկեղեցու գանձերը» նախադեպը չունեցող ցուցահանդեսը: Այս այցելության կարևորությունը շեշտելով, Հայոց Հայրապետն ուրվագծեց հայ ժողովրդի ներկայիս կյանքի հոգևոր-բարոյական պատկերը. «Մենք այսօր պիտի ապրենք առավել կյանքի գիտակցությամբ, որովհետև փոխվել է մեր ազգային կյանքի պատկերը: Այսօր այլևս ազատության գրունն է բացվել մեզ բոլորիս միացնող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Մայր Հայրենիքում: Հայ ժողովուրդը կորուստներ լինելուց վերածվել է բաղարջի և այդ բաղարջի փուռը մեր Մայր Եկեղեցին ու Հայրենիքն են»: Նորին Սրբությունը, մանրամասն կերպով ներկայացնելով Մայր Աթոռի գործունեությունը, կոչ արեց բոլորին անշահախնդրորեն մասնակցություն բերել այդ առաքելությանը, որովհետև «Հայ Եկեղեցին և Հայաստանը բոլորիս պատասխանատվությունն է անխտիր»:

Հավարտ սրբական արարողության Վեհափառ Հայրապետը հյուրը եղավ համայնքի կողմից տրված մտերմիկ սիրո ճաշի:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը մեկնեց Վիեննա:

## ԺԱՄԱՆՈՒՄ ՎԻԵՆՆԱ

Հունիսի 22-ի երեկոյան Վեհափառ Հայրապետը Ամստերդամից ժամանեց Վիեննա: Վիեննայի օդանավակայանի հատուկ սպասասրահում Նորին Սրբությունը դիմավորվեց Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ավստրիահայոց Առաջնորդ Մեսրոպ արք. Գրիգորյանի, Ավստրիայում և Արևելյան Եվրոպայում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Ոսկանյանի, դեսպանի խորհրդական Սամվել Մկրտչյանի, թեմական խորհրդի ատենապետ Արմեն Ութուջյանի, «Pro Oriente» կազմակերպության ներկայացուցչի, ազգային բարերար Վլադիմիր Հարությունյանի, Վիեննայի «Թովմաս քոլեջ»-ում իր ուսումը շարունակող Մայր Աթոռի միաբան Մաշտոց աբղ. Ժոռոյանի, թեմական խորհրդի անդամների և ազգայինների կողմից:

Ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետը հանգստի համար առաջնորդվեց հյուրանոց:



ԺԱՄԱՆՈՒՄ ՎԻԵՆՆԱ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԵՆ
ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆ ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆԸ ԵՎ
ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

որ դարձյալ առիթ ընծայեց իրեն հանդիպելու հոլանդահայ իր զավակներին և այս պատմական եկեղեցում ևս մեկ անգամ սուրբ և անմահ պատարագի հաղորդությամբ ամրացնելու նրանց հարազատությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության հետ: Այնուհետև Նորին Սրբությունը պատմական ակնարկ կատարեց հոլանդահայ գաղութի մասին, անդրադառնալով հայ ժողովրդի ժամանակի այն խոշոր մշակութային ձեռքբերումներին, որոնք տեղի են ունեցել Ամստերդամ քաղաքում՝ մասնավորաբար նշելով Ոսկան Երևանցի վարդապետի կողմից 1666 թվականին և հրատարակված Աստվածաշունչը:

Ապա Վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր այս այցելության մանրամասները՝ մասնակցություն Գրացի Բ միջեկեղեցական համաժողովին և միևնույն ժամանակ հայրապետական այցելություն Ավստրիահայոց համայնքին, այնուհետև անձամբ նախագահելու Ռուսաց Ալեքսիյ Բ Պատրիարքի հետ միասին Մոսկվայում բացվող «Հայ Եկեղեցու գանձերը» նախադեպը չունեցող ցուցահանդեսը: Այս այցելության կարևորությունը շեշտելով, Հայոց Հայրապետն ուրվագծեց հայ ժողովրդի ներկայիս կյանքի հոգևոր-բարոյական պատկերը. «Մենք այսօր պիտի ապրենք առավել կյանքի գիտակցությամբ, որովհետև փոխվել է մեր ազգային կյանքի պատկերը: Այսօր այլևս ազատության գարունն է բացվել մեզ բոլորիս միացնող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Մայր Հայրենիքում: Հայ ժողովուրդը կտորտանքներ լինելուց վերածվել է բաղարջի և այդ բաղարջի փուռը մեր Մայր Եկեղեցին ու Հայրենիքն են»: Նորին Սրբությունը, մանրամասն կերպով ներկայացնելով Մայր Աթոռի գործունեությունը, կոչ արեց բոլորին անշահախնդրորեն մասնակցություն բերել այդ առաքելությանը, որովհետև «Հայ Եկեղեցին և Հայաստանը բոլորիս պատասխանատվությունն է անխտիր»:

Հավարտ սրբազան արարողության Վեհափառ Հայրապետը հյուրը եղավ համայնքի կողմից տրված մտերմիկ սիրո ճաշի:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը մեկնեց Վիեննա:

## ԺԱՄԱՆՈՒՄ ՎԻԵՆՆԱ

Հունիսի 22-ի երեկոյան Վեհափառ Հայրապետը Ամստերդամից ժամանեց Վիեննա: Վիեննայի օդանավակայանի հատուկ սպասասրահում Նորին Սրբությունը դիմավորվեց Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ավստրիահայոց Առաջնորդ Մեսրոպ արք. Գրիգորյանի, Ավստրիայում և Արևելյան Եվրոպայում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Ոսկանյանի, դեսպանի խորհրդական Սամվել Մկրտչյանի, թեմական խորհրդի ատենապետ Արմեն Ութուջյանի, «Pro Oriente» կազմակերպության ներկայացուցչի, ազգային բարերար Վլադիմիր Հարությունյանի, Վիեննայի «Թովմաս քոլեջ»-ում իր ուսումը շարունակող Մայր Աթոռի միաբան Մաշտոց աբղ. Ժոռոյանի, թեմական խորհրդի անդամների և ազգայինների կողմից:

Ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետը հանգստի համար առաջնորդվեց հյուրանոց:



ԺԱՄԱՆՈՒՄ ՎԻԵՆՆԱ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԵՆ
ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆ ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆԸ ԵՎ
ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ



ՍԻՐՈ ՃԱՇ ԳՐԱՑԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ